ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 04/2026/Վ/Վ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 10 հունիսի, 2026 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Արմեն Մարուխյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի նկատմամբ 2026 թվականի մարտի 12-ին վարքագծի կանոնի առերևույթ խախտման վերաբերյալ հարուցված թիվ 04/2026/Վ/Վ վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑ

I. Նախապատմություն

1.1. Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով և հիմք ընդունելով «mediahub.am» լրատվական կայքի՝ 2025 թվականի հոկտեմբերի 26-ի՝ «Հլը ցածր, խի՞ եք ոգևորվել. Դիլիջանի «արու» քաղաքապետի նյարդային պահվածքը» վերտառությամբ հրապարակումը[1] (այսուհետ՝ Հրապարակում), 2026 թվականի մարտի 12-ին կայացրել

[1] Հասանելի՝ https://mediahub.am/post/vcqpqk6hjegyvduc

է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին թիվ 04/2026/Վ/Վ որոշումը (այսուհետ նաև՝ Հարուցման որոշում):

1.2. Հրապարակմամբ ներկայացված տեսանյութում (այսուհետ՝ Տեսանյութ) Դավիթ Սարգսյանը լրագրողների հետ հարցազրույցի շրջանակներում նշում է. «Աղոթքին գալուց եկել եք, հա՞րց եք տալիս: Գոնե ամոթ...»: Նրան ընդհատում է լրագրողներից մեկը, ով բարձրատոն կերպով հարցնում է. «Հիմա որ ես պատարագ մատուցեմ, կմասնակցե՞ք:»: Դ.Սարգսյանը պատասխանում է. «Հլը ցածր, հլը ցածր, ինձ հետ էդ տոնով չխոսաս, ի՛:»: Լրագրողը նշում է. «Հլը մի վայրկյան, մի վայրկյան, մի վայրկյան: Հիմա որ ես պատարագ մատուցեմ, կմասնակցե՞ք:»: Դ.Սարգսյանն արձագանքում է. «Ասում եմ՝ ինձ հետ էդ տոնով չխոսաս:»: Լրագրողը կրկին նշում է. «Հիմա որ ես պատարագ մատուցեմ, կմասնակցե՞ք:»: Դ.Սարգսյանը նշում է. «Հանգստացի, գնա մի հատ ուրիշ...»: Լրագրողը շարունակում է հարցազրույցը մեկ այլ ներկայի հետ:

Տեսանյութի 1:10 րոպեին լրագրողներից մեկը ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցնում է. «Դուք մարզպետն եք, պարզ ա, որ քաղաքապետին բերել եք, իսկ քաղաքապետը մարդ բերե՞լ ա:»: Դ.Սարգսյանն արձագանքում է. «Խի մարզպետը մարդ չի՞: Քաղաքապետին չեն բերում: Ես եկել եմ (լրագրողն արձագանքում է՝ հա, դուք...): Հա:»: Մեկ այլ լրագրող հարցնում է Դ.Սարգսյանին. «Ձեր հայացքը, վերաբերմունքը (հստակ չի լսվում): Ի վերջո համայնքի ղեկավար եք:»: Դ.Սարգսյանն արձագանքում է. «Իմ համար իմ որոշումը, իմ ձևաչափը շատ նորմալ ա, դուք ձեր ձևաչափերի մասին մտածեք (լրագրողներն արձագանքում են՝ շատ ագրեսիվ եք տրամադրված):»: Լրագրողներից մեկը հարցնում է. «Դուք գոնե սովորեցի՞ք Ձեր ինքնակենսագրականի մեջ արու չգրել, հա՞:»: Դ.Սարգսյանն արձագանքում է. «Ես էնքան սովորել եմ, որ Ձեր... (հստակ չի լսվում) բան եմ բացատրում:»: Տեսանյութի 2:00 րոպեին լրագրողներից մեկը Դ.Սարգսյանին հարցնում է. «Պարոն Սարգսյան, Դուք չսովորեցի՞ք, որ ոչ թե արու... (հստակ չի լսվում) ինքնակենսագրականում, այլ «արական» և «իգական»:»: Դ.Սարգսյանն արձագանքում է. «Ես էնքան բան եմ սովորել, որ ձեր նմաններին կարամ դաստիարակեմ էլ, սովորացնեմ էլ, եղա՞վ:»: Լրագրողն

արձագանքում է. «Համենայն դեպս, Ձեր ինքնակենսագրականից երևում է՝ Դուք ինչ... որքան եք կրթություն ստացել, ինչ մակարդակի կրթություն...»: Դ.Սարգսյանն ի պատասխան նշել է. «Ես էնքան կրթություն եմ ստացել, որ դու երկար ժամանակ փորձես ապրես, չես կարա իմ չափ կրթություն ստանաս, եղա՞վ:»: Լրագրողն արձագանքում է. «Ինչպե՞ս է ստացվել, որ Դուք «արու» էիք գրել Ձեր ինքնակենսագրականի մեջ:»: Դ.Սարգսյանը պատասխանում է. ««Արու» եմ գրե՞լ: Ձեր նմաններն են էլի փորձել սադրեն:»: Ներկայացված տեղեկատվության համաձայն՝

1.3. Հանձնաժողովը 2026 թվականի մարտի 13-ին թիվ 01/680-2026 գրությամբ Հարուցման որոշումը փոստի և էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկել է Դավիթ Սարգսյանին՝ միաժամանակ պահանջելով ներկայացնել պարզաբանում վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Նշված գրությունը Դ.Սարգսյանն ստացել է 2026 թվականի մարտի 17-ին (հիմք՝ [redacted] փոստային անդորրագիր):

1.4. Հանձնաժողովի վարույթների և իրավական ապահովման վարչության աշխատակիցը 2026 թվականի մայիսի 6-ին հեռախոսազրույց է ունեցել Դիլիջանի համայնքապետարանի աշխատակցի, իսկ 2026 թվականի մայիսի 7-ին՝ Դավիթ Սարգսյանի հետ՝ նաև բանավոր տեղեկացնելով պարզաբանում ներկայացնելու անհրաժեշտության մասին: Դ.Սարգսյանը հայտնել է, որ կներկայացնի պարզաբանումը, սակայն վարույթի շրջանակներում պարզաբանում չի ներկայացրել:

II. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

2.1. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ավագանու՝ 2021 թվականի նոյեմբերի 16-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքի ուժով Դավիթ Մարտունի Սարգսյանը հանդիսանում է Դիլիջան համայնքի ընտրված ղեկավար և պաշտոնավարում է մինչ օրս:

2.2. Զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ 2025 թվականի հոկտեմբերի 26-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հովհաննավանքում մասնակցել է

պատարագի, որը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից ճանաչվել է անօրինական, քանի որ այն մատուցվել է կարգալույծ հռչակված քահանա Տեր Արամի (աշխարհիկ անունը՝ Ստեփան Ասատրյան) կողմից[2]: Համաձայն զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների՝ նշված պատարագին մասնակցել է նաև Դավիթ Սարգսյանը[3]:

2.3. Տեսանյութ 1-ի, «tert.am» լրատվական կայքի՝ 2025 թվականի հոկտեմբերի 26-ի՝ «Ձեր հարցը տալիս չե՞ք ամաչում. ես այնքան բան եմ սովորել, որ ձեզ հիմա բան եմ բացատրում. Դիլիջանի քաղաքապետը՝ լրագրողներին (տեսանյութ)» հրապարակմամբ[4] ներկայացված տեսանյութի (այսուհետ՝ Տեսանյութ 2) և «YouTube» սոցիալական ցանցի՝ «24TV» ալիքով 2025 թվականի հոկտեմբերի 25-ին հրապարակված՝ «Կենսագրության մեջ «արու» գրած Դիլիջանի քպ-ական համայնքապետը նույնպես Հովիաննավանքում էր» վերտառությամբ տեսանյութի[5] (այսուհետ՝ Տեսանյութ 3) ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

2025 թվականի հոկտեմբերի 25-ին լրագրողներից մեկը Դ.Սարգսյանին հարցրել է (Տեսանյութ 2-ի 00:00 րոպե). «Ի՞նչ խորհուրդ ունի այս օրը Ձեզ համար:»:

Հարցին ի պատասխան՝ Դ.Սարգսյանը հարցրել է՝ Դուք քրիստոնյա ե՞ք: Լրագրողը պատասխանել է՝ իհարկե, ինչին արձագանքելով՝ Դ.Սարգսյանը նշել է. «Ձեր հարցը տալուց չե՞ք ամաչում, ի՞նչ խորհուրդ ունի: Աղոթքին գալուց եկել եք, հա՞րց եք տալիս: Գոնե ամոթ...»:

Մեկ այլ լրագրող ընդհատել է նրան՝ բարձրատոն կերպով հարցնելով. «Հիմա որ ես պատարագ մատուցեմ, կմասնակցե՞ք:»:

Դ.Սարգսյանը ևս բարձրատոն պատասխանել է. «Հլը ցածր, հլը ցածր, ինձ հետ էդ տոնով չխոսաս, ի՛:»:

---

[2] Տես, օրինակ, «civilnet.am» լրատվական կայքի՝ 2025 թվականի հոկտեմբերի 25-ի «Նիկոլ Փաշինյանը մասնակցեց Մայր Աթոռի կողմից անօրինական ճանաչված պատարագին» վերտառությամբ հրապարակումը, հասանելի՝ https://civilnet.am/hy/video/982163

[3] Տես, օրինակ, «abcmedia.am» լրատվական կայքի՝ 2025 թվականի հոկտեմբերի 26-ի «Պատգամավոր, մարզպետ, համայնքապետ. ՔՊ-ականներից ովքե՞ր են Հովիաննավանքում» վերտառությամբ հրապարակումը, հասանելի՝ https://abcmedia.am/norutyunner/200645/

[4] Հասանելի՝ https://tert.am/am/news/2025/10/26/dilijan/4247880

[5] Հասանելի՝ https://www.youtube.com/watch?v=VkoT5G1fGJo

Լրագրողն, արձագանքելով, նշել է. «Հլը մի վայրկյան, մի վայրկյան, մի վայրկյան: Հիմա որ ես պատարագ մատուցեմ, կմասնակցե՞ք:»:

Դ.Սարգսյանն արձագանքել է. «Ասում եմ՝ ինձ հետ էդ տոնով չխոսաս:»:

Լրագրողը կրկին նշել է. «Հիմա որ ես պատարագ մատուցեմ, կմասնակցե՞ք:»:

Զուգահեռաբար ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը Դ.Սարգսյանին ինչ-որ բան է ասել, որը տեսանյութերի ուսումնասիրությամբ հստակ լսելի չէ, լսելի են միայն «Դավիթ ջան, մի» բառերը, իսկ մեկ այլ ներկա նշել է՝ եկել են գործ սարքեն, հա:

Դ.Սարգսյանը նշել է. «Հանգստացի, գնա մի հատ ուրիշ...»:

Ներկաներից մեկը լրագրողին հարցրել է. «Բայց դու կարա՞ս պատարագ մատուցես:»:

Լրագրողը հարցրել է. «Բա հիմա ինչպե՞ս կարող է Ստեփան Ասատրյանը պատարագ մատուցել:»:

Լրագրողների և նշված անձի միջև երկխոսությունը շարունակվել է, զուգահեռաբար առաջին լրագրողը դիմել է Դ.Սարգսյանին. «Հարցիս չպատասխանեցիք, պարոն Սարգսյան:»:

Դ.Սարգսյանն արձագանքել է. «Ես Ձեր հարցին պատասխանեցի»:

Լրագրողը հարցրել է՝ ի՞նչ պատասխանեցիք:

Դ.Սարգսյանը հարցրել է. «Դուք քրիստոնյա՞ եք:»:

Լրագրողը նշել է. «Հարցնում եմ՝ ի՞նչ խորհուրդ ունի օրը Ձեզ համար:»:

Դ.Սարգսյանն արձագանքել է. «Մի րոպե, հարցը տվեցիք, պատասխանում եմ, եթե քրիստոնյա եք ու աղոթքի եք եկել կամ եկեղեցու դուռն եկել, դրա համար չեն գալիս, մարդուն հարց տալիս:»:

Լրագրողը նշել է. «Քրիստոնեական, քրիստոնեական օրը...»:

Դ.Սարգսյանն ընդհատել է՝ նշելով. «Դա իմ իրավունքն ա՝ ես որտեղ եմ գնում, դա ձեզ թող չհետաքրքրի:»:

Մեկ այլ լրագրող հարցրել է. «Ես հարցնում եմ՝ այսօր եկեղեցական ի՞նչ տոն է, տեղյա՞կ եք, Դուք տեղյա՞կ եք՝ այսօր եկեղեցական ի՞նչ տոն է:»:

Դ.Սարգսյանը նշել է. «Հարգելիս, էն կողմ գնացեք, լա՞վ: Էն կողմ գնացեք, թողեք իմ հանգիստով կանգնեմ, ի՞նչ եք ուզում:»:

Լրագրողը նշել է. «Դուք Ձեզ համայնքապետին վայել վարք դրսևորեք:»: Դ. Սարգսյանն արձագանքել է՝ նշելով՝ իյա՛:

ՀՀ Տավուշի մարզպետ Հ.Ղալումյանը դիմել է Դ.Սարգսյանին, նրան ինչ-որ բան ասել, նրա խոսքերը, սակայն, լսելի չեն:

Լրագրողներից մեկը հարցրել է. «Այսինքն, պարոն Ղալումյանն է՞ Ձեզ ցուցումներ տալիս:»:

Մեկ այլ լրագրող հարցրել է. «Ձեզ հետ ժողովուրդ եկե՞լ ա: Ձեր համայնքի բնակիչներից որևէ մեկը Ձեր հետ եկե՞լ ա:»:

ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը հարցրել է. «Լավ, ինչի մենք ժողովուրդ չե՞նք:»:

Լրագրողը նշել է. «Դուք մարզպետն եք, պարզ ա, որ քաղաքապետին բերել եք, իսկ քաղաքապետը մարդ բերե՞լ ա:»:

Դ.Սարգսյանն արձագանքել է. «Խի մարզպետը մարդ չի՞:»:

Հայկ Ղալումյանը նշել է. «Բերե՞լ ենք: Քաղաքապետը իրա մտածելակերպը ունի, քաղաքապետը եկել ա, չեմ բերել»:

Զուգահեռաբար Դ.Սարգսյանը նշել է. «Քաղաքապետին չեն բերում: Ես եկել եմ (լրագրողն արձագանքում է՝ հա, Դուք...): Հա, հա:»:

Մեկ այլ լրագրող դիմել է Դ.Սարգսյանին. «Ձեր հայացքը, վերաբերմունքը փոխեք, հա՞: Ի վերջո համայնքի ղեկավար եք:»:

Դ.Սարգսյանն արձագանքել է. «Իմ համար իմ որոշումը, իմ ձևաչափը շատ նորմալ ա, դուք ձեր ձևաչափերին մտածեք, ձեր ձևաչափին բան արեք (լրագրողներից մեկը նշում է՝ շատ ագրեսիվ եք տրամադրված, մեկ այլ լրագրող արձագանքում է՝ Դուք շատ ագրեսիվ եք):»:

Հ.Ղալումյանը զուգահեռաբար նշել է. «Ժողովուրդ ջան, Ձեր էդ տրամադրվածությունը՝ մեզ հունից հանելու, չի ստացվելու:»:

Լրագրողներից մեկը հարցրել է. «Դուք գոնե սովորեցի՞ք Ձեր ինքնակենսագրականի մեջ արու չգրել, հա՞:»:

Դ.Սարգսյանն արձագանքել է. «Ես էնքան սովորել եմ, որ Ձեզ հիմա բան եմ բացատրում:»:

Հ.Ղալումյանը Դ.Սարգսյանին ասել է՝ գնա էնտեղ, ինչից հետո Դ.Սարգսյանը մի փոքր հեռացել է:

Լրագրողները շարունակել են երկխոսությունը վերոնշյալ ներկա անձի հետ:

Տեսանյութ 1-ի 2:00 րոպեին լսելի է, որ լրագրողներից մեկը Դ.Սարգսյանին հարցրել է. «Պարոն Սարգսյան, Դուք չսովորեցի՞ք, որ ոչ թե արու… (հստակ չի լսվում) ինքնակենսագրականում, այլ «արական» և «իգական»:»:

Դ.Սարգսյանն արձագանքել է. «Ես էնքան բան եմ սովորել, որ ձեր նմաններին կարամ դաստիարակեմ էլ, սովորացնեմ էլ, եղա՞վ:»: Հ.Ղալումյանը զուգահեռաբար նշել է՝ Դավիթ ջան, Դավիթ:

Լրագրողն արձագանքել է. «Համենայն դեպս, Ձեր ինքնակենսագրականից երևում է՝ Դուք ինչ… որքան եք կրթություն ստացել, ինչ մակարդակի կրթություն…»:

Դ.Սարգսյանն ի պատասխան նշել է. «Ես էնքան կրթություն եմ ստացել, որ դու երկար ժամանակ փորձես ապրես, չես կարա իմ չափ կրթություն ստանաս, եղա՞վ:»:

Լրագրողն արձագանքել է. «Ինչպե՞ս է ստացվել, որ Դուք «արու» էիք գրել Ձեր ինքնակենսագրականի մեջ:»:

Դ.Սարգսյանը պատասխանել է. ««Արու» եմ գրե՞լ իմ կենսագրականի մեջ: Ձեր նմաններն են էլի փորձել սադրեն:»:

Հ.Ղալումյանը նշել է. «Դավիթ, Դավիթ, Դավիթ, ոչ մի հարցի մի պատասխանի:»:

Լրագրողներից մեկը հարցրել է. «Ի՞նչն են սադրում: Ձեր գրա՞ծն են կեղծել:»:

Հ.Ղալումյանը նշել է. «Ժողովուրդ ջան, չի ստացվելու, չի ստացվելու: Այո, և մեզ սադրելը, ոչ թե հարցազրույց…»:

2.4. «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական էջում՝ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին/ Mother See of Holy Etchmiadzin», 2024 թվականի դեկտեմբերի 26-ին հրապարակված եկեղեցական տոնացույցի համաձայն՝ 2025 թվականի հոկտեմբերի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը նշել է Ս. Խաչի Գյուտի տոնը[6]:

---

[6] Հասանելի՝ https://www.facebook.com/holyetchmiadzin/posts/%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%

2.5. Զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների[7] ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ դեռևս 2021 թվականին սոցցանցերում հրապարակվել էր ձևաթուղթ, որտեղ երևում էր, որ Դավիթ Սարգսյանն իր անձնական տվյալները լրացնելիս սեռը նշելու հատվածում գրել էր՝ արու, իսկ մասնագիտության բաժինը ջնջումներով էր լրացրել:

Այս առթիվ Դավիթ Սարգսյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր էջում կատարել էր հետևյալ գրառումը.

«Սիրելի՛ դիլիջանցիներ, վերջին ամիսներին հայ հասարակությանը մշտական սթրեսի մեջ պահող, ստերի ու զրպարտությունների անհատակ ջրհոր հիշեցնող տելեգրամյան հայտնի ալիքը հրապարակել է մի խեղված, կեղծված ձևաթուղթ, որում ես իբր սխալ եմ նշել ուսումնառությանս վայրը, ջնջել, ուղղել և մի ուրիշ սխալ էլ իբր արել եմ սեռի համար նախատեսված դաշտում: Ցավով եմ արձանագրում, որ հայրենիքումս գործող լրատվամիջոցները առանց ինձ հետ կապ հաստատելու, սրա իսկությունը ստուգելու փորձերի իրար հերթ չտալով տարածում են այս ցնդաբանությունը»:

III. Վարքագծի կանոնների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ, կիրառելի իրավական հիմքեր

3.1. «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի համաձայն.

«1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները

A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BF%D5%B8%D5%B6%D5%A5%D6%80-2025-%D5%A9/1029047102597541/

[7] Տես, օրինակ, «aravot.am» լրատվական կայքի՝ 2021 թվականի փետրվարի 27-ի՝ «Դիլիջան քաղաքում նոր ղեկավար է նշանակվել. նա հերքում է, թե սեռը նշել է «արու»» վերտառությամբ հրապարակումը, հասանելի՝ https://www.aravot.am/2021/02/27/1174243/

սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

(...)

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները: (...)»:

3.2. Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշման հավելվածով սահմանված պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Վարքագծի կանոնագիրք) 1-ին կետի համաձայն.

«1. (...) կանոնագիրքը վարքագծի կանոնների ամբողջություն է, որով պետք է առաջնորդվեն համապատասխան պաշտոն զբաղեցնող անձինք:»:

3.3. Վարքագծի կանոնագրքի 4-րդ բաժնի 1-ին գլխով նախատեսվում են բարեվարքության և հարգալիրության սկզբունքից բխող՝ զանգվածային լրատվության միջոցներով և սոցիալական մեդիայով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց հաղորդակցությանը վերաբերելի վարքագծի կանոնները:

3.4. Նշված գլխում ներառված՝ Վարքագծի կանոնագրքի 51-րդ կետի համաձայն.

««51. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է լրագրողների, լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հաղորդակցվելիս ցուցաբերել հարգալից վերաբերմունք, իր գործողություններով չխախտել լրատվամիջոցների ներկայացուցիչների իրավունքները, չխոչընդոտել նրանց օրինական գործունեությանը և մասնագիտական աշխատանքին:»:

3.5. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

2. Վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:

3. Եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում է դիմողին, պաշտոն զբաղեցնող անձին և նրա վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (առկայության դեպքում):

(...)

6. (...)

Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական համապատասխան պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է Հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրված խախտման կամ շահերի բախման վերաբերյալ ներկայացնել հրապարակային պարզաբանում, որն ստացվելու պահից եռօրյա ժամկետում հրապարակվում է այն մարմնի կայքէջում, որտեղ պաշտոն զբաղեցնող անձն զբաղեցնում է պաշտոն:»:

IV. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

Նկատի ունենալով, որ վարույթի շրջանակներում քննարկվում է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ղեկավար Դ.Սարգսյանի խոսքային և ոչ խոսքային վարքագծի իրավաչափության հարցը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նշված դեպքում կարծիքի արտահայտման ազատության իրավունքի սահմաններին:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական

սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

(…)

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»:

Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն.

«1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: (…)

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները

պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ արտահայտման ազատությունը ժողովրդավարական հասարակության էական հիմքերից և դրա զարգացման հիմնական նախապայմաններից մեկն է: Արտահայտման ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարենպաստ կերպով են ընդունվում կամ դիտարկվում են որպես ոչ վիրավորական կամ արժանանում են անտարբերության, այլ նաև այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք վիրավորում, ապշեցնում կամ անհանգստացնում են: Այսպիսին են բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության պահանջները, առանց որոնց չի կարող լինել «ժողովրդավարական հասարակություն»:

Եվրոպական դատարանը նշել է, որ արտահայտման ազատությունը ենթակա է բացառությունների, որոնք, սակայն, պետք է խիստ կերպով մեկնաբանվեն և նման սահմանափակումների անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հաստատվի:[8] Ընդ որում, արտահայտման ազատությունը տարածվում է ոչ միայն գաղափարների և տեղեկությունների բովանդակության, այլ նաև դրանց արտահայտման ձևի նկատմամբ:[9]

Միաժամանակ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ սկզբունքները չեն բացառում հնարավորությունը, որ որոշ արտահայտություններ կարող են Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի ներքո տրամադրվող պաշտպանության շրջանակից դուրս լինել: Փաստացի տվյալները կամ արժեքների կամ

---

[8] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 42, Կարակսոնին և այլոք ընդդեմ Հունգարիայի (ՄՊ) (Karácsony and Others v. Hungary[GC]) գործով 2016 թվականի մայիսի 5-ի վճիռը, դիմումներ nos. 42461/13, 44357/13, §132, Ինկալն ընդդեմ Թուրքիայի (ՄՊ) (Incal v. Turkey[GC]) գործով 1998 թվականի հունիսի 9-ի վճիռը, դիմում no. 22678/93, § 46

[9] Տես, օրինակ, Յերսիլդն ընդդեմ Դանիայի (ՄՊ) (Jersild v. Denmark [GC]) գործով 1994 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռը, դիմում no. 15890/89, § 31

զգացմունքների վերաբերյալ պնդումները կարող են պաշտպանվել 10-րդ հոդվածով, եթե դրանք, օրինակ, արտահայտում են անձի համոզմունքները կամ ինքնությունը կամ նպաստում են հանրային կարծիքի ձևավորմանը, միաժամանակ, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ նույնը վերաբերելի չէ վիրավորանքներին, որոնց պաշտպանության համար անհրաժեշտ են համոզիչ պատճառներ:

Այս առնչությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ 10-րդ հոդվածի պաշտպանության ներքո գերազանցապես ընդգրկվում են կարծիքների արտահայտումը և տեղեկատվության ու գաղափարների տրամադրումն ու ստացումը, որը ներառում է քննադատական արտահայտություններն ու դիտարկումները: Միաժամանակ, խոսքի որոշ դրսևորումներ, ինչպիսիք են անպարկեշտ կամ անվայել արտահայտությունները, գաղափարների արտահայտման տեսանկյունից էական դերակատարում չունեն: Վիրավորական արտահայտությունը կարող է դուրս լինել արտահայտման ազատության պաշտպանության շրջանակից, եթե նման արտահայտությունը չարամիտ վիրավորանք է պարունակում և դրա միակ նպատակը վիրավորելն է:[10]

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ պետք է հստակ տարանջատում կատարվի քննադատության և վիրավորանքի միջև: Եթե խոսքի ցանկացած դրսևորման նպատակը պարզապես վիրավորելն է, ապա համաչափ սանկցիան, որպես կանոն, չի հանգեցնի Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման: Միաժամանակ, միայն վիրավորական կամ կոպիտ արտահայտությունների ենթատեքստի մանրակրկիտ ուսումնասիրության միջոցով է, որ հնարավոր կլինի կատարել նման տարանջատել ցնցող և վիրավորող խոսքը, որը պաշտպանվում է Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով, այնպիսի խոսքից, որը հանգեցնում է անհիմն վարկաբեկման:[11]

---

[10] Տես, օրինակ, Ռուջակն ընդդեմ Խորվաթիայի (Rujak v. Croatia) գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, դիմում no. 57942/10, §§ 27-29

[11] Տես, օրինակ, Գասպարին ընդդեմ Հայաստանի (Gaspari v. Armenia (No. 2)) գործով 2023 թվականի հուլիսի 11-ի վճիռը, դիմում no. 67783/13, § 27, Մեսիչն ընդդեմ Խորվաթիայի (Mesić v. Croatia) գործով 2022 թվականի մայիսի 5-ի վճիռը, դիմում no. 19362/18, § 33

Եվրոպական դատարանը նաև կարևորել է այն հանգամանքը, թե ում դեմ է խոսքն ուղղված: Մասնավորապես, Եվրոպական դատարանի կայուն նախադեպային պրակտիկայի համաձայն՝ պետք է տարանջատում մտցվի մասնավոր անձանց և հանրային ենթատեքստում գործող անձանց՝ հասարակական կամ քաղաքական գործիչների միջև: Թույլատրելի կամ իրավաչափ քննադատության սահմաններն ավելի լայն են, երբ այն ուղղված է քաղաքական կամ հասարակական գործիչների, քան մասնավոր անձանց նկատմամբ:[12]

Այսպիսով, Հանձնաժողովն արձանագրում է, որ Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ վիրավորական արտահայտությունները չեն օգտվում Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի ներքո տրամադրվող պաշտպանությունից այն դեպքում, երբ դրանց միակ նպատակը վիրավորելն է, և դրանք այլ կերպ չեն նպաստում հանրային կարևորություն ունեցող հարցի քննարկմանը կամ երբ դրանք հատում են թույլատրելի քննադատության սահմանները: Միաժամանակ, մասնավոր անձանց նկատմամբ թույլատրելի քննադատության սահմաններն ավելի նեղ են, քան հասարակական կամ քաղաքական գործիչների:

Նկատի ունենալով, որ սույն վարույթի շրջանակներում քննարկվում է լրագրողների նկատմամբ ենթադրյալ ոչ հարգալիր վերաբերմունքի դրսևորման հարցը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև զանգվածային լրատվության միջոցների դերին և նրանց պարտականություններին վերաբերելի՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

Այսպես, Եվրոպական դատարանը բազմիցս ընդգծել է, որ մամուլը ժողովրդավարական հասարակությունում առանձնահատուկ դեր ունի և այդ առումով լրագրողներն առանձնահատուկ կարգավիճակ ունեն՝ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի ներքո պաշտպանության շրջանակների համատեքստում: Ըստ այդմ,

[12] Տես, օրինակ, Լոբարդոն և այլոք ընդդեմ Մալտայի (Lombardo and Others v. Malta) գործով 2007 թվականի ապրիլի 24-ի վճիռը, դիմում no. 7333/06, § 54, Ռոզեյրո Բենտոն ընդդեմ Պորտուգալիայի (Roseiro Bento v. Portugal) գործով 2006 թվականի ապրիլի 18-ի վճիռը, դիմում no. 29288/08, § 42, Վերլասգրուպպե Նյուզ ԳՄԲՀ և ԲՈԲԻ-ն ընդդեմ Ավստրիայի (Verlagsgruppe News GMBH and BOBI v. Austria) գործով 2012 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, դիմում no. 59631/09, § 78

Եվրոպական դատարանն արձանագրել է, որ մամուլին ընձեռնվող երաշխիքներն առանձնահատուկ կարևորություն ունեն:[13]

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ թեև մամուլը չպետք է անցնի որոշակի սահմանները, այն այնուամենայնիվ ունի պարտականություն՝ տարածելու հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ, իսկ հասարակությունն, իր հերթին, իրավունք ունի դրանք ստանալու: Հակառակ պարագայում լրատվամիջոցները չէին կարողանա իրականացնել հանրային վերահսկողի իրենց դերը:[14] Միաժամանակ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի ներքո լրագրողներին շնորհված պաշտպանությունը ենթադրում է, որ նրանք պետք է գործեն բարեխղճորեն՝ հասարակությանը ճշգրիտ, հուսալի և փաստական հենք ունեցող տեղեկատվություն տալու նպատակով՝ առաջնորդվելով պատասխանատու լրագրության սկզբունքներով: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում, որպես կանոն, «պատասխանատու լրագրությունը» վերաբերել է հրապարակման կամ բանավոր հայտարարությունների բովանդակությանը և լրագրողի վարքագծի իրավաչափությանը:[15]

Միաժամանակ, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ մամուլի ազատությունը ներառում է չափազանցության և անգամ սադրանքի որոշակի աստիճանի կիրառումը: Ընդ որում, Եվրոպական դատարանը նշել է, որ լրագրողներն իրենց մասնագիտական աշխատանքի շրջանակներում իրավունք ունեն քննադատել, անգամ սուր կերպով և որպես գռեհիկ դիտարկվող արտահայտությունների կիրառմամբ: Միաժամանակ, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ ներպետական մարմինները կարող են

---

[13] Տես, օրինակ, Մագյար Հելսինկի Բիզոտտսագն ընդդեմ Հունգարիայի (ՄՊ) (Magyar Helsinki Bizottság v. Hungary [GC]) գործով 2016 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, դիմում no. 18030/11, § 165

[14] Տես, օրինակ, Բլադետ Տրոմսոն և Ստենսաասն ընդդեմ Նորվեգիայի (ՄՊ) (Bladet Tromsø and Stensaas v. Norway [GC]) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, դիմում no. 21980/93, §§ 59, 62 և Դը Սանդեյ Թայմսն ընդդեմ Մեծ Բրիտանիյաի (The Sunday Times v. the United Kingdom (No.1)) գործով 1979 թվականի ապրիլի 26-ի վճիռը, դիմում no. 6538/74, § 65

[15] Տես, օրինակ, Պենտիկաինենն ընդդեմ Ֆինլանդիայի (ՄՊ) (Pentikäinen v. Finalnd [GC]) գործով 2015 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, դիմում no. 11882/10, §§ 90-91, Շտոլլն ընդդեմ Շվեյցարիայի (ՄՊ) (Stoll v. Switzerland [GC]) գործով 2007 թվականի դեկտեմբերի 10-ի վճիռը, դիմում no. 69698/01, § 103

գնահատել, թե արդյոք դեպքի ենթատեքստը, հանրային շահը և լրագրողի դիտավորությունն արդարացրել են սադրանքի կամ չափազանցության գործածումը:[16]

Վերոգրյալի համատեքստում քննարկելով սույն Դ.Սարգսյանի վարքագիծը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ոչ միայն Դ.Սարգսյանի կիրառած առանձին արտահայտությունների բովանդակությանը, այլև դրանց կիրառման նպատակին, նրա ոչ խոսքային վարքագծի դրսևորումներին, միջադեպին՝ իր ամբողջության մեջ, ներառյալ՝ լրագրողների վարքագծին և սոցիալական ենթատեքստին:

Այսպես, Հանձնաժողովն արձանագրում է, որ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների համաձայն՝ 2025 թվականի հոկտեմբերի 25-ին ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը Հովհաննավանքում մասնակցել է պատարագի, որը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից ճանաչվել է անօրինական, քանի որ այն մատուցվել է կարգալույծ հռչակված քահանա Տեր Արամի (աշխարհիկ անունը՝ Ստեփան Ասատրյան) կողմից: Նշված պատարագին մասնակցել է նաև Դ.Սարգսյանը: Միաժամանակ, 2025 թվականի հոկտեմբերի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը նշել է Ս. Խաչի Գյուտի տոնը:

Հանձնաժողովը գտնում է, որ նշվածով են պայմանավորված լրագրողների հարցերը Դ.Սարգսյանին առ այն, թե նշված օրն իր համար ինչ խորհուրդ ունի, քանի որ վերջինս տոնի ընթացքում մասնակցել է պատարագի, որը մատուցվել է կարգալույծ հռչակված քահանայի կողմից: Նմանապես, դրանով է պայմանավորված մեկ այլ լրագրողի հարցն առ այն, թե արդյոք Դ.Սարգսյանը կմասնակցի տվյալ լրագրողի մատուցած պատարագին: Ասվածը հաստատվում է նաև լրագրողի և մեկ այլ ներկայի միջև երկխոսությամբ, որի շրջանակներում տվյալ անձը հարցնում է լրագրողին՝ բայց դու կարա՞ս պատարագ մատուցես, ինչին ի պատասխան լրագրողն արձագանքում է՝ բա հիմա ինչպե՞ս կարող է Ստեփան Ասատրյանը (այն է՝ կարգալույծ հռչակված քահանա Տեր Արամը) պատարագ մատուցել:

[16] Խուրալը և Զեյնալովն ընդդեմ Ադրբեջանի (Khural and Zeynalov v. Azerbaijan (No. 2)) գործով 2023 թվականի հունվարի 19-ի վճիռը, no. 383/12, §§ 49, 55

Հանձնաժողովը գտնում է, որ Եկեղեցու կառավարման, դրա շրջանակներում հոգևոր սպասավորների կողմից եկեղեցական կանոններին հետևելու, կարգալույծ հռչակված քահանայի կողմից պատարագ մատուցելու հնարավորության վերաբերյալ հարցերը կարող են լինել հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի շուրջ բանավեճի քննարկման առարկա, հատկապես՝ երբ այդ առթիվ հրապարակային դիրքորոշում են հայտնում բարձրաստիճան պաշտոնատար անձինք՝ դրանք վերածելով լայն հասարակության քննարկման առարկայի: Եկեղեցու հետևորդներն իրավունք ունեն տեղեկացված լինելու՝ որքանով են հոգևոր սպասավորները համապատասխանում Եկեղեցու կողմից հռչակված բարոյական չափանիշներին և արդյոք նրանք պահպանում են եկեղեցական կանոնները: Հանձնաժողովը, ըստ այդմ, գտնում է, որ լրագրողների կողմից Դ.Սարգսյանին ուղղված հարցերը վերաբերել են հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի:

Հանձնաժողովն արձանագրում է, որ լրագրողը, որը հարցրել է Դ.Սարգսյանին՝ արդյոք վերջինս կմասնակցի տվյալ լրագրողի կողմից մատուցված պատարագին, հարցը հնչեցրել է բարձրատոն կերպով, բացի այդ, հարցի բովանդակությունն ինքնին որոշակի հեգնական կամ անգամ սադրիչ բնույթ կարող է ունենալ: Այնուամենայնիվ, Հանձնաժողովն արձանագրում է, որ հարցը չի ներկայացվել Դ.Սարգսյանին վիրավորելով, այն վերաբերել է հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի և դրա շրջանակներում, Հանձնաժողովի գնահատմամբ, լրագրողը կարող էր հնչեցնել սուր հարցեր՝ գործածելով իրեն նախընտրելի ոճական մոտեցումները:

Այս համատեքստում գնահատելով Դ.Սարգսյանի արձագանքը՝ Հանձնաժողովը վերահաստատում է սույն վարույթը հարուցելու մասին որոշմամբ կատարված արձանագրումն առ այն, որ Դ.Սարգսյանը նպատակ է ունեցել ոչ թե վիրավորելու լրագրողին, այլ քննադատելու, սաստելու նրան, կոչ անելու իր հետ խոսել առավել հարգալիր տոնով:

Այսպես, Դ.Սարգսյանը բարձրատոն կերպով նշել է. «Հլը ցածր, հլը ցածր, ինձ հետ էդ տոնով չխոսաս, ի:»: Անդրադառնալով գործածված բառերի բովանդակությանը՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

1) «հլը» բառը թեև նշանակում է դեռ, դեռևս (Ստեփան Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան. Երեւան: Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչություն, 1944, էջ 1261), այնուամենայնիվ կարող է դիտվել որպես հեգնանքով կամ ավելի բացահայտ վիրավորական միտում ունեցող արտահայտություն: «Հլը» բառը խոսողի կողմից կարող է կիրառվել, երբ խոսակցի պահվածքը կամ խոսքի ոճը իրեն անհարկի է թվում,

2) «ի/իհ» բառն արտահայտում է արհամարհանք, դժգոհություն, տհաճություն՝ թո՛ղ, դենը տա՛ր, թող կորչի (Արդի հայերենի բացատրական բառարան, Էդուարդ Բագրատի Աղայան, «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976, էջ հ.1, էջ 486): «Ի»-ի միջոցով խոսողը ակնարկում է «լռելու» պահանջ կամ հրահանգ:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Դ.Սարգսյանի կողմից նշված արտահայտությունների հնչեցման հիմնական նպատակը լրագրողի գործածած տոնայնության առթիվ դժգոհություն արտահայտելն ու նրան քննադատելն է: Հանձնաժողովը, այնուամենայնիվ, գտնում է, որ Դ.Սարգսյանի վարքագիծը տվյալ պարագայում անհամաչափ է լրագրողի վարքագծին և չի համապատասխանում լրագրողի նկատմամբ հարգալիր վարքագիծ դրսևորելու վերաբերյալ Վարքագծի կանոնագրքի 51-րդ կետով նախատեսված պահանջին՝ հաշվի առնելով հետևյալը.

1) թեև լրագրողը հարցը հնչեցրել էր բարձրատոն կերպով, այնուամենայնիվ, նա Դ.Սարգսյանին չէր վիրավորել, նրա ձայնի տոնայնությունը ևս, Հանձնաժողովի գնահատմամբ, վիրավորական երանգ չէր կրել,

2) ի տարբերություն լրագրողի՝ Դ.Սարգսյանը պաշտոնական հաղորդակցության շրջանակներում օգտագործել է «դու» դիմելաձևը «Դուք»-ի փոխարեն և կիրառել հեգնանք, դժգոհություն արտահայտող առօրյա-խոսակցական բառեր,

3) Դ.Սարգսյանի տոնայնությունը, նրա դեմքի արտահայտությունը, կեցվածքը ոչ պաշտոնական, ոչ հարգալիր և կոպիտ են եղել,

4) Դ.Սարգսյանը շարունակել է մյուս լրագրողների հետ նշված ոչ խոսքային վարքագծի դրսևորմամբ՝ ոչ պաշտոնական, կոպիտ կեցվածքով, տոնայնությամբ և դեմքի արտահայտությամբ հաղորդակցությունն այն պարագայում, երբ լրագրողները համարժեք վարքագիծ չեն դրսևորել: Հանձնաժողովը գտնում է, որ լրագրողների

կողմից հնչեցված հարցն առ այն, թե ի՞նչ խորհուրդ է տվյալ եկեղեցական տոնը կրում Դ.Սարգսյանի համար, անպայմանորեն հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի շուրջ չի եղել, այնուամենայնիվ, նշված հարցերի ուղղումը Դ.Սարգսյանին պայմանավորված է եղել պատարագին վերջինիս մասնակցությամբ: Հանձնաժողովը կրկնում է, որ կարգալույծ հռչակված քահանայի կողմից պատարագի մատուցումը և բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից դրան մասնակցությունը հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցեր են, քանի որ առնչվում են Եկեղեցու կառավարմանը: Այս առումով լրագրողների կողմից Դ.Սարգսյանին ուղղված հարցն առ այն, թե ինչ խորհուրդ ունի տվյալ օրն իր համար, կամ արդյոք նա գիտի, թե այդ օրն ինչ եկեղեցական տոն է, կարող էին ուղղված լինել ստուգելուն՝ որքանով է Դ.Սարգսյանը տեղեկացված եկեղեցական կանոններից, սովորույթներից, տոներից՝ հաշվի առնելով, որ վերջինս մասնակցում է պատարագի: Հանձնաժողովը գտնում է, որ չի կարող գնահատել լրագրողների հարցի արդյունավետությունը կամ խնդրին առնչության աստիճանը, քանի որ դրանք հենց լրագրողների կողմից գնահատման և որոշման ենթակա հանգամանքներ են, որոնց կարող է արձագանքել նաև հարցերին պատասխանող հանրային պաշտոն զբաղեցնող անձն իր պատասխանի շրջանակներում: Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ լրագրողներն իրացրել են իրենց մասնագիտական առաքելությունը՝ հնչեցնելով սադրիչ հարցեր, ինչը նրանց մասնագիտական գործունեության մասն է, իսկ Դ.Սարգսյանը նշված հարցերին պատասխանել է ոչ հարգալիր տոնայնությամբ և կեցվածքով: Նշվածն արձանագրվել է նաև լրագրողների կողմից, որոնք կոչ են արել «հայացքը, վերաբերմունքը փոխելու»՝ հիմնավորելով դա նրանով, որ «ի վերջո համայնքի ղեկավար եք», նշել են, որ Դ.Սարգսյանն ագրեսիվ է:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում առանձին քննարկել Դ.Սարգսյանի վարքագիծը, երբ վերջինս պատասխանում էր հետևյալ հարցին. «Դուք գոնե սովորեցի՞ք Ձեր ինքնակենսագրականի մեջ արու չգրել, հա՞:»: Դ.Սարգսյանը նշված հարցին պատասխանել է՝ նշելով. «Ես էնքան սովորել եմ, որ Ձեզ հիմա բան եմ բացատրում:»: Նմանատիպ երկխոսություն լրագրողի և Դ.Սարգսյանի միջև տեղի է ունեցել նաև մի փոքր անց, երբ լրագրողը հարցրել է. «Պարոն Սարգսյան, Դուք

չսովորեցի՞ք, որ ոչ թե արու (հստակ չի լսվում) ինքնակենսագրականում, այլ «արական» և «իգական»:»: Նշված հարցին ի պատասխան՝ Դ.Սարգսյանը նշել է. «Ես էնքան բան եմ սովորել, որ ձեր նմաններին կարամ դաստիարակեմ էլ, սովորացնեմ էլ, եղա՞վ:»: Լրագրողն արձագանքել է՝ նշելով. «Համենայն դեպս, Ձեր ինքնակենսագրականից երևում է՝ Դուք ինչ... որքան եք կրթություն ստացել, ինչ մակարդակի կրթություն...»: Դ.Սարգսյանն ի պատասխան նշել է. «Ես էնքան կրթություն եմ ստացել, որ դու երկար ժամանակ փորձես ապրես, չես կարա իմ չափ կրթություն ստանաս, եղա՞վ:»:

Հանձնաժողովը նախ արձանագրում է, որ նշված հարցերը վերաբերել են դեռևս 2021 թվականին կատարված հրապարակումներին առ այն, որ Դ.Սարգսյանն իր անձնական տվյալները լրացնելիս սեռը նշելու հատվածում գրել է՝ արու, իսկ մասնագիտության բաժինը ջնջումներով է լրացրել: Հանձնաժողովը գտնում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց գրագիտությունը, կրթությունը կարող են հանրությանը հետաքրքրող հարցեր լինել, և լրագրողները կարող են այս առթիվ հարցեր հնչեցնել: Այնուամենայնիվ, Հանձնաժողովն ընդգծում է, որ այս առթիվ տեղեկությունները հրապարակվել էին դեռևս 2021 թվականին, մինչդեռ սույն վարույթով քննարկվող միջադեպը տեղի է ունեցել ավելի քան 4 տարի անց՝ 2025 թվականի հոկտեմբերին, ընդ որում, Դ.Սարգսյանը հրապարակային կերպով հերքել էր նշված տեղեկությունները:

Հանձնաժողովը նաև կարևորում է այն հանգամանքը, որ Դ.Սարգսյանի հետ հարցազրույցը կապված չէր նշված թեմայի հետ և լրագրողները նշված հարցը հնչեցնում են հեգնական տոնով՝ հարցնելով՝ արդյոք Դ.Սարգսյանը սովորեց իր կենսագրությունում սեռն «արու» չնշել: Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ պարագայում հարցի հնչեցումն առավելապես հեգնելու և սադրելու և ոչ թե տեղեկատվության հավաքման նպատակ ուներ: Հանձնաժողովը գտնում է, որ այն հարցի գնահատումը՝ արդյոք լրագրողները գործել են պատասխանատու լրագրությունից բխող չափանիշների շրջանակներում, Հանձնաժողովի գործառույթների շրջանակից դուրս է, այնուամենայնիվ, Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ լրագրողները տեղեկատվության հավաքման նպատակ չհետապնդող, հեգնական հարցադրումների ներկայացման պարագայում պետք է

ողջամտորեն ակնկալեն, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձի արձագանքը ևս կարող է հեգնական կամ քննադատող բնույթ կրել: Միաժամանակ, Հանձնաժողովն ընդգծում է, որ լրագրողներին թույլատրելի է սադրանքի, սուր քննադատության շատ ավելի լայն շրջանակ, քան նրանց հետ հաղորդակցվող պաշտոնատար անձանց:

Վերոգրյալի համատեքստում դիտարկելով Դ.Սարգսյանի վարքագիծը և նրա հնչեցրած պատասխանները, Հանձնաժողովը գտնում է, որ դրանք հատել են իրավաչափության սահմանը՝ հետևյալի հաշվառմամբ.

1) Վարքագծի կանոնագրքի 51-րդ կետը ենթադրում է, որ լրագրողների կողմից սադրիչ և հեգնական արտահայտություններին արձագանքելիս հանրային պաշտոն զբաղեցնող անձինք կարող են քննադատել լրագրողներին կտրուկ և կոշտ կերպով, այնուամենայնիվ, նման քննադատությունը չպետք է հատի հարգալիրության որոշակի սահմանը, այն է՝ չներառի անձնական բնույթի վիրավորանքներ կամ լրագրողի անձնական հատկանիշների վերաբերյալ հնչեցված վիրավորական արտահայտություններ, գռեհիկ արտահայտություններ, չպարունակի լրագրողի խոսքին խիստ անհամաչափ տոնայնություն և այլն,

2) Դ.Սարգսյանն իր խոսքում անդրադարձել է լրագրողների կրթությանը՝ նշելով, որ ինքն այնքան է սովորել, որ «ձեր նմաններին կարամ դաստիարակեմ էլ, սովորացնեմ էլ», ինչպես նաև, որ ինքն այնքան կրթություն է ստացել, որ «դու երկար ժամանակ փորձես ապրես, չես կարա իմ չափ կրթություն ստանաս»: Հանձնաժողովը գտնում է, որ լրագրողների կրթության և նրանց սովորելու կարողությունների վերաբերյալ բացասական երանգավորմամբ արտահայտություններն իրենց բնույթով վիրավորական էին, քանի որ որոշակիորեն նվաստացնում էին լրագրողների կրթվելու կարողությունները: Հանձնաժողովն, ըստ այդմ, գտնում է, որ Դ.Սարգսյանի խոսքերը կրել են վիրավորելու և ոչ թե քննադատելու նպատակ,

3) տվյալ պարագայում ևս Դ.Սարգսյանի ոչ խոսքային վարքագիծը՝ դեմքի արտահայտությունը, տոնայնությունը, կեցվածքը կրել են ոչ հարգալիր և կոպիտ բնույթ՝ լրացուցիչ վիրավորական և հեգնական բնույթ արտահայտելով Դ.Սարգսյանի խոսքերին, ինչի արդյունքում դրանք ոչ համաչափ են եղել լրագրողների վարքագծին:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 33-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

1. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի կողմից վարքագծի կանոնի խախտման առկայության մասին:

2. Եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկել ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ